ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N° Ե -03/43 Գ. Շիրակամուտ

«21» 02. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 8-Ա և թիվ 9-Ա և 10-Ա որոշումները :

Առդիր 3էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունվարի 2018 թվականի N8 - Ա

ԱԲՐԱՀԱՄ ՉԱԽԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 071883 վկայականը և Աբրահամ Չախալյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աբրահամ Չախալյանին սեփականության իրավունքով պատկանող Շիրակամուտ համայնքի թիվ 14-րդ փողոցի վրա գտնվող 06-087-042-016 կադաստրային ծածկագրով 0,1264 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա գտնվող թիվ 20/8 բնակելի տան հասցեն փոխել «գ. Շիրակամուտ, թիվ 14 փողոց , թիվ 49 » հասցեով:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21 » փետրվարի 2018 թվականի N9 - Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով և հիմք ընդունելով Շիրակամուտի համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի 2018թ. հունվարի 17-ի թիվ 1 արձանագրությունը, քաղ.՝ Գուրգեն Պապիկյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Շիրակամուտ համայնքի բյուջեի 4726 հոդվածից Շիրակամուտ համայնքի բնակիչ Գուրգեն Մուրադի Պապիկյանին՝ հարազատի հուղարկավորության ծախսերը հոգալու նպատակով, հատկացնել դրամական օգնություն 30000/երեսունհազար/ ՀՀ դրամ.

2.Համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » փետրվարի 2018 թվականի N10 - Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱԶԻԿ ԻԳԻԹԽԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ և ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ և ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,,,Տեղական տուրքերի և վճարների մասին՛՛ ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով,համաձայն ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19- թիվ 843 և Շիրակամուտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 32-Ն որոշումների,և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նազիկ Իգիթխանյանի 2018թվականի հունվարի 30-ի հայտը՝ որոշում եմ

1.Անհատ ձեռնարկատեր Նազիկ Իգիթխանյանին /ՀՎՀՀ 66939471/ տալ ,, գ.Շիրակամուտ փողոց թիվ 16, թիվ 25՛՛ հասցեում գտնվող 48 քմ մակերեսով խանութում /հիմնական շինություն/, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2018 թվականի համար՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան